

**ԼՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ  
ՆԱԽԱԴԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԳՐԱՎՈՐ  
ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՐՆԹԱՑՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ  
ԿԻՐԱՌՎՈՂ ՌՈՒՍԱԿԱՆ ԵՎ ՇՎԵՅՑԱՐԱԿԱՆ  
ՄԵԹՈՂԻԿԱՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

*Մանուկյան Ա. Վ.*

*Խաչատուր Աբովյանի անվան հայկական պեդագոգական մանկավարժական համալսարանի հարուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու*

**Հանգուցային բառեր և արտահայտություններ.** լսողության խանգարում ունեցող նախադպրոցական տարիքի երեխաներ, բանավոր խոսքի զարգացում, գրավոր խոսքի ուսուցում, ռուսական մեթոդիկա, շվեյցարական մեթոդիկա:

Հայտնի է, որ լսողության խանգարում ունեցող նախադպրոցական տարիքի երեխաների ուսուցման գործընթացում կարևոր դեր է հատկացվում գրավոր խոսքի զարգացմանը:

Հատուկ մանկավարժությունը նախատեսում է լսողության խանգարում ունեցող նախադպրոցական տարիքի երեխաների գրավոր խոսքի զարգացման համար նպատակաուղղված և հետևողական աշխատանքների անցկացում: Բանավոր խոսքը, որն արտասանվում է խոսողի կողմից նորմալ տեմպով, խոսակիցների տեսադաշտից միանգամից անհետանում է: Լսողության խանգարում ունեցող նախադպրոցական տարիքի երեխաների ուսուցման գործընթացի սկզբում, երբ որ բառերը նոր են ներմուծվել նրանց խոսքային գործունեության մեջ, դրանց ընկալելը, ճանաչելը և միմյանցից

տարբերակելը չափազանց դժվար է: Բանավոր խոսքի ընկալումը չլսող երեխաների համար հեշտացնելու նպատակով ամեն անգամ խոսքային գործունեությունը կանգնեցնելն անհնարին է, իսկ բառերի արտաբերումը ցանկալի չէ դանդաղեցնել, քանի որ այն կհանգեցնի խոսքի տեմպի խանգարմանը: Որպեսզի չլսող երեխան հասցնի ըմբռնել հնչող խոսքը և այն համադրի առարկայական գործունեության հետ, նրան անհրաժեշտ է բանավոր խոսքի տիրապետման բավականին փորձ, ուշադրության և կամաձին հիշողության զարգացման որոշակի մակարդակ:

Անցյալի սուրդոմանկավարժների փորձը բացահայտել է, որ միայն բանավոր արտասանության հիման վրա արտաբերվող խոսքի ընթրնման կարողության ձևավորումը չափազանց դժվար և երկարատև գործընթաց է:

Չլսող փոքրիկների՝ բանավոր խոսքին տիրապետելու տեմպերի արագացմանը միտված սուրդոմանկավարժների որոնումները, բազմիցս կանգ են առել խոսքային միավորների գրաֆիկական պատկերների վրա: Նրանք իրենց աշխատանքներում կարևորում են գրավոր

խոսքի վաղ ուսուցումը և ապացուցում դրա անհրաժեշտությունը [2, 5, 6 և այլոք]:

Խոսողի դեմքից՝ շուրթերի շարժումներից խոսքի ամբողջական ընկալումը, որն ամրապնդված է մասնակի լսողությամբ, բանավոր խոսքին չտիրապետող երեխայի մեջ ձևավորում է բառի մոտավոր պատկերը: Որպեսզի այդ պատկերը մի ակնթարթում ջնջված չլինի, այն պետք է ամրապնդել գրավոր խոսքով:

Բնական է, որ լսողության խանգարում ունեցող նախադպրոցական տարիքի երեխան ուսուցման սկզբնական փուլում ի վիճակի չէ բառի կազմում եղած յուրաքանչյուր տառը մասնատել դրա ամբողջական գրաֆիկական պատկերից: Բայց բառի ամբողջական պատկերը, որն ուղեկցվում է արտասանությամբ՝ բազմաթիվ անգամ ներկայացնելով երեխային, նրա կողմից աստիճանաբար մտապահվում է և համադրվում արտասանվող բառի հետ:

Մասնագիտական գրականության մեջ ներկայացված են մի խումբ սուրդոմանկավարժների մշակած մեթոդիկաներ, որոնք միտված են վաղ նախադպրոցական տարիքի չլսող երեխաների գրավոր խոսքի զարգացմանը [6, 7, 8, 9, 3, 10, 2, 5, 4, 1 և այլոք]:

Դեռևս 20-րդ դարի սկզբում ձևավորվել էր լսողության խանգարում ունեցող երեխաների կրթության կազմակերպման մի ուղղություն, որոնց ներկայացուցիչները նշում էին, որ սկզբնական փուլում գրավոր խոսքը ուսուցման հիմնական միջոց է, որի հիման վրա ձևավորվում է բա-

նավոր խոսքը [9 և այլոք]: Այդ ուղղության ներկայացուցիչները նման մոտեցումը հիմնավորում էին նրանով, որ «<խոսքի գրավոր ձևը խուլների կողմից ավելի հեշտ է ընկալվում, քան շուրթերից կարդալը>>: Այսինքն, գրավոր խոսքի հիման վրա կառուցվում էր շուրթերից կարդալու կարողության գործընթացը: Նրանց կարծիքով, գրավոր խոսքի տիրապետումը նպաստում է խոսքի ընդհանուր զարգացման գործընթացի արագացմանը:

20-րդ դարի կեսերին A.Ewing (1964) առաջարկում է գրավոր խոսքի զարգացումն իրականացնել «<Listening-Reading-Speaking>> («<Լսել-Կարդալ-Խոսել>>») մեթոդի հիման վրա: Մի շարք մասնագետների կողմից մշակվեցին վաղ բառային խոսքի զարգացման վերաբերյալ մեթոդական ուղեցույցներ [8, 3, 5, 4, 1]: Դրանց համաձայն լսողության խանգարում ունեցող նախադպրոցական տարիքի երեխաների բանավոր և գրավոր խոսքային կարողությունների զարգացումն արդյունավետ է իրականացնել միաժամանակ:

Լսողության խանգարում ունեցող նախադպրոցական տարիքի երեխաների գրավոր խոսքի ձևավորումն ու զարգացումն իրականացվում է 2 փուլով.

1-ն փուլ՝ բառերի ամբողջական ընկալում,

2-րդ փուլ՝ վերլուծահամադրական ընկալում:

Սուրդոմանկավարժների պրակտիկայում բացահայտվեց, որ մեր երկրում լսողության խանգարում ունեցող նախադպրոցական տարիքի երեխաների գրավոր խոսքի զար-

գացմանն ուղղված ռուսական մեթոդիկական լայն կիրառում ունի: Այսօր տարածում է ստացել նաև շվեյցարական մեթոդիկական:

Ռուսական մեթոդիկայի համաձայն, խոսքի ամբողջական ընկալման կարողության ձևավորման փուլում շահեկան է պատրաստի բառաքարտերի լայն կիրառումը: Այս գործընթացում չլսող երեխային առաջարկվում են բառաքարտեր՝ զուգընթաց արտասանելով համապատասխան խոսքային նյութը: Երեխաները սովորում են դրանք զուգորդել առարկաների, նկարների հետ, անվանել և փորձել դրանք հիշել ամբողջական տառապատկերով:

Այս եղանակով աստիճանաբար զարգանում է երեխաների տեսողական հիշողությունը, և նրանք սկսում են մտապահել ու տարբերակել բառաքարտերի վրա գրված բառերը: Ուսուցման ընթացքում երեխաները սովորում են տառերով բառեր կազմել, ինչպես նաև արտանկարել բառաքարտերի բառերը և համադրել դրանք նկարներին, առարկաներին:

Ուսուցման 1,5 տարվա գլոբալ մեթոդով իրականացվող ընթերցանությունից երեխաներն աստիճանաբար անցնում են վերլուծահամադրական ընթերցանության: Բազմակի ընթերցելով բառեր, նախադասություններ, փոքրիկ տեքստեր՝ լսողության խանգարում ունեցող նախադպրոցական տարիքի երեխաներն ուսուցման վերջում աստիճանաբար տիրապետում են ինքնուրույն գրավոր խոսքին:

Սեմինարների միջոցով շվեյցարական մեթոդիկական մեզ ներկայաց-

վեց Հայդի Հելշտաբի կողմից, որը մեր երկիրն այցելում էր 1997-2012 թվականներին: Տարվա մեջ երկու անգամ կազմակերպված սեմինարների միջոցով նա հատուկ մանկավարժներին ուսուցանեց լսողության խանգարում ունեցող նախադպրոցական տարիքի երեխաների բառային խոսքի զարգացման ուղղությունները, մեթոդները և միջոցները:

Հայդի Հելշտաբի մեթոդիկական մեզ առաջարկեց լսողության խանգարում ունեցող նախադպրոցական տարիքի երեխաների գրավոր խոսքի զարգացման այլ ճանապարհ: Քանի որ լսողության խանգարում ունեցող նախադպրոցական տարիքի երեխաների բանավոր խոսքը զարգանում է գրավոր խոսքի հետ զուգընթաց, շվեյցարացի մասնագետն առաջարկվեց առօրյա իրավիճակների, տպավորությունների և ապրումների օրագրի վարում:

Կյանքի առօրյա տպավորությունների օրագրում, որը վարում է երեխան՝ ծնողի և մանկավարժի ուղղորդմամբ, պատկերվում են երեխայի հետ կապված տարբեր իրավիճակներ, տպավորություններ, որոնց շուրջը կատարվում են համապատասխան գրառումներ:

Շվեյցարացի մասնագետները [8, 10], գրավոր խոսքի զարգացումը նորմալ լսող երեխայի բանավոր խոսքի զարգացման փուլերի հետ համեմատելով, նշում են, որ նորածնային և մանկիկային շրջանում երեխան դեռևս չի հասկանում իրեն ուղղված խոսքը, սակայն միևնույն է՝ մայրը միշտ խոսում է նրա հետ, անկախ նրանից՝ փոքրիկն ընկալում է այդ խոսքը, թե ոչ: Աստիճանաբար,

երեխան ժամանակի ընթացքում, այդ խոսքային <<հոսքից>> սկսում է հասկանալ առանձին բառեր, արտահայտություններ, ընթանել ասվածի իմաստը: Նույն սկզբունքով էլ նրանք առաջարկում են ձևավորել լսողության խանգարում ունեցող նախադպրոցական տարիքի երեխաների գրավոր խոսքը:

Գրավոր խոսքի ձևավորման ընթացքում երեխային ուղղորդում է մանկավարժը և ծնողը: Նրանք նկարչության ժամանակ պատկերում են տարբեր իրավիճակներ, և համատեղ ղեկավարելով երեխայի ձեռքը՝ գրում են համապատասխան արտահայտություններ և մտքեր: Ուսուցման սկզբնական փուլում, երբ դեռևս զարգացած չէ երեխայի բանավոր և գրավոր խոսքը, մանկավարժը և ծնողը պետք է խոսեն և գրեն երեխայի փոխարեն՝ նրան տալով պատրաստի խոսքային նմուշներ: Խոսքային նմուշների կուտակման ընթացքում ձևավորվում և զարգանում է չլսող երեխայի բառային խոսքը:

Ուսուցման սկզբնական շրջանում չլսող փոքրիկը սկսում է լավ հիշել այն բառերի գրաֆիկական պատկերները, որոնք ավելի հաճախակի են հանդիպում գրավոր խոսքում: Օրինակ, նրանք լավ են մտապահում իրենց սեփական, մերձավորների և ընկերների անունները: Աստիճանաբար նրանք սկսում են համադրել հնչյունները տառերի հետ և հաճախակի հանդիպող տառերը մասնատում բառերից և մտապահում դրանք:

Գրավոր խոսքի ձևավորման և զարգացման ընթացքում մանկավարժի և ծնողի օգնությունն աստիճանաբար նվազում է: Երեխան հի-

շում է ավելի՛ ու ավելի՛ շատ տառեր, որը նրան հնարավորություն է տալիս այդ ծանոթ տառերը պարունակող բառերն ինքնուրույն ընթերցել:

Վերլուծահամադրական մեթոդով կազմակերպված ընթերցանության ժամանակ անհրաժեշտ է հետևել որոշ պահանջներին: Օրինակ, գրելու և կարդալու ընթացքում ծանոթ բառերը և տառերը երեխան պիտի կարդա և գրի ինքնուրույն, իսկ մնացած խոսքային տարրերը՝ մեծահասակի օգնությամբ: Ուսուցման ընթացքում տիրապետելով այբուբենի ողջ տառերին՝ նա սկսում է աստիճանաբար ինքնուրույն կարդալ նաև անծանոթ բառեր, նախադասություններ, տեքստեր:

Դիտարկելով և ուսումնասիրելով մանկավարժների և ծնողների կատարած աշխատանքը՝ կարևորում ենք նշել ռուսական և շվեյցարական մեթոդիկաների դրական կողմերը և ընդգծել այն դժվարությունները, որոնք առաջանում են այդ մեթոդներով աշխատելու ընթացքում:

Ռուսական մեթոդիկան առաջարկում է բազմաթիվ խաղային վարժություններ և առաջադրանքներ, որոնք նպաստում են լսողության խանգարում ունեցող նախադպրոցական տարիքի երեխաների գրավոր խոսքի ձևավորմանը և զարգացմանը: Սակայն, <<Արաբկիր>> բժշկական համալիրին կից վերականգնողական կենտրոնի մասնագետները (թվով 5) և ծնողները (40 հոգի) նշում են, որ առարկաների և նկարների հետ բառաքարտերի համադրումը երեխաներն այդքան էլ հաճույքով չեն կատարում: Ծնողների մեծամասնությունը (82,5%) նաև հրաժարվում

է բառաքարտերը տեղադրել տան առարկաների վրա՝ հիմնավորելով, որ տնային պայմաններում դա այդքան էլ հարմար չէ:

Միաժամանակ բոլոր մասնագետները (100%) նշում են ռուսական մեթոդիկայի արդյունավետության մասին: Ըստ նրանց՝

- զարգանում է չլսող փոքրիկների տեսողական և բառային հիշողությունը,
- բառաքարտերի հետ աշխատանքը նպաստում է բառերի հստակ արտաբերմանը,
- առանձին տառերով բառերի և բառերով նախադասությունների կազմումը նպաստում է նրանց կողմից բառի հնչյունատառային կազմի լսողատեսողական ընկալման կարողության զարգացմանը,
- ինքնաշեն գրքերի գործածումը նպաստում է բանավոր և գրավոր խոսքի զարգացմանը,
- նպատակաուղղված և համակարգված աշխատանքի դեպքում չլսող երեխաները նախադարձական ուսուցման վերջում տիրապետում են գրավոր խոսքին:

Նշված կենտրոնի մասնագետները (100%) նաև նշում են, որ շվեյցարական մասնագետների կողմից առաջարկված օրագրերով աշխատանքը նույնպես բավականի արդյունավետ է: Չլսող երեխաները հաճույքով մեծ հետաքրքրությամբ և պարբերաբար վերանայում են իրենց օրագրերը, դիտում նկարները, կարդում կատարած գրառումները: Սա խոսքային նյութի կրկնության և ամրապնդման ինքնատիպ փորձի կուտակում է: Օրագրի էջերը զրուցելու թեմաներ են դառնում: Այս մո-

տեցումը համարվում է լսողության խանգարում ունեցող երեխաների կապակցված խոսքի զարգացման հզոր միջոց: Սակայն մասնագետների հետ մեր կազմակերպած զրույցների և դիտարկումների ժամանակ բացահայտեցինք, որ նրանք (100%) չեն աշխատում միայն շվեյցարական մեթոդիկայով: Նման մոտեցումը բացատրվում է այն հանգամանքով, որ նրանք չեն կարողանում կամ դժվարանում են նկարել ստեղծված իրավիճակները և առաջացած տպավորությունները: Դրա հետ մեկտեղ՝ մասնագետները (100%) նշում են այդ մեթոդիկայի դրական կողմերը.

- չլսող երեխաների առօրյա կյանքից վերցրած իրավիճակները և տպավորությունները հետաքրքիր են դարձնում ուսուցման գործընթացը,
- երեխային սովորեցնում է իրավիճակները պատկերել թղթի վրա և վերարտադրել տեղի ունեցած իրադարձությունները,
- ծնողին սովորեցնում է անուշադրության չմատնել երեխային հետաքրքրող առօրյա իրավիճակները և ձևավորում է թղթի վրա դրանք պատկերելու սովորություն՝ միաժամանակ բանավոր և գրավոր խոսքի զարգացման ուղղությամբ կատարելով համապատասխան աշխատանքներ,
- Հայաստանում չկան լսողության խանգարում ունեցող նախադարձական տարիքի երեխաների գրավոր խոսքի զարգացմանը նպաստող համապատասխան պատկերազարդ գրքեր, և այս պայմաններում առօրյա տպավորությունների օրագրերը դառնում

են չլսող նախադպրոցական տարիքի երեխաների առաջին գրքերը,

- նախադպրոցական կրթության մեթոդապես ճիշտ կազմակերպված աշխատանքի արդյունքում երեխաները ձեռք են բերում ինքնուրույն գրավոր խոսք կառուցելու կարողություն:

Այսպիսով, Հայաստանում տարածում ստացած լսողության խանգարում ունեցող նախադպրոցական տարիքի երեխաների գրավոր խոսքի զարգացմանն ուղղված երկու մեթոդիկաներն էլ ունեն դրական կողմեր, և ճիշտ կազմակերպված աշխատանքի դեպքում կարող են արդյունավետ լինել: Սակայն մեր կողմից իրականացված հետազոտական

աշխատանքները բացահայտեցին, որ մասնագետները (100%) լիովին չեն հիմնվում մեկ մեթոդիկայի վրա, այլ աշխատանքն իրականացնելիս օգտվում են ն ռուսական, ն շվեյցարական մեթոդիկաներից: Հետևաբար, կարող ենք հավաստիացնել, որ մասնագետների միջև չկա աշխատանքային համագործակցություն: Յուրաքանչյուրը հիմնվում է իր աշխատանքային փորձի և նպատակահարմարության վրա: Լսողության խանգարում ունեցող նախադպրոցական տարիքի երեխաների կրթության հատուկ ծրագրի բացակայությունը նրանց հետ իրականացվող աշխատանքը դարձնում է ոչ համակարգված և ոչ լիարժեք:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Корсунская Б.Д. Чтение как цель и средство в системе дошкольного обучения глухих //Дефектология. 2007 – N1, С.39–47

2. Леве А. Развитие слуха у неслышащих детей: История. Методы. Возможности /Пер. с нем. –М., 2003, с.130 –133

3. Леонгард Э.И., Самсонова Е.Г. Развитие речи детей с нарушенным слухом в семье. – М., 1991 – 319 с.

4. Манукян А.В. Влияние рекомендованной системы игр на развитие письменной речи у дошкольников с нарушением слуха /Специальная педагогика и психология. Сборник научно-методических статей/ – Ер., Зангак-97, 2005, С.149–153

5. Носкова Л.П., Головчиц Л.А. Методика развития речи дошкольников с нарушением слуха. – М., 2004. – С.33–53, 317–341

6. Рай Н.А. Дошкольное воспитание глухонемых. – М., 1947 – С.47–57 Ewing A., Ewing E. Teaching deaf children to talk. – Manchester, 1964.

7. Schmid-Giovannini S.: Heft 3. 2–4 Jahre. – Zollikon, 1987, 82 p.

8. Ling D. Foundations of spoken language for hearing impaired children. – Washington, 1989.

9. Heldstab H. Kinder, die nicht sprechen. – Universitäts – Kinderklinik Zürich, 1995, 69 p., p.1–17

**РЕЗЮМЕ**

**АНАЛИЗ ИСПОЛЬЗУЕМОЙ В АРМЕНИИ РОССИЙСКОЙ И ШВЕЙЦАРСКОЙ  
МЕТОДИКИ ПО РАЗВИТИЮ ПИСЬМЕННОЙ РЕЧИ У ДЕТЕЙ ДОШКОЛЬНОГО  
ВОЗРАСТА С НАРУШЕНИЯМИ СЛУХА**

**Манукян А.В.**

*доцент кафедры специальной педагогики и психологии Армянского  
государственного педагогического института имени Хачатура Абовяна,  
кандидат педагогических наук*

Дан анализ двух используемых методик в Армении по развитию письменной речи у дошкольников с нарушениями слуха – российской и швейцарской. Показаны положительные стороны данных методик, на практике

а также выявленные недостатки. Подчеркивается необходимость создания специальной программы для обучения дошкольников с нарушениями слуха.

**SUMMARY**

**THE ANALYSIS USED IN ARMENIA THE RUSSIAN AND SWISS TECHNIQUE ON DEVELOPMENT OF WRITTEN LANGUAGE OF PRESCHOOL AGE CHILDREN WITH HEARING IMPAIRMENTS**

**Manukyan A.V.**

*Associate professor in Chair of Special Pedagogy and Psychology, Khachatur Abovyan Armenian State Pedagogical University, Candidate of Pedagogical Sciences*

The analysis of two almost used techniques in Armenia for development of written language for preschool children with a hearing disorder – Russian and Swiss is given in the article . Positive sides of these techniques are shown,

the having shortcomings are revealed in practice. Need of creation of the special program for training of preschool children with a hearing disorder is emphasized.